

ընթերցումները նմուշներ կտանք հետզհետե մեր դիտողութեանց մէջ, որով խորենացու ձեռագիր ունեցողները կարող են որոշել իրենց ձեռագրի ինչ խմբի պատկանելը և միւս կողմից դրանով մի նոր փորձական վերաստուգութեան կենթարկուի իմ առաջարկած



ՄԻԱԲԱՆ.

## ՄԵՇ ԿՐԻՏԻԿՈՍԸ

### III.



յս է Տէնի աշխարհայեացքը և այս է տիեզերական երևոյթների հետազոտութեան մեթոդը որ նա գործադրում է իւր ուսումնասիրութեան ենթակայ գիտութեանց բոլոր շրջաններում: Դոցա մէջ գլխաւոր տեղը բռնում են բացի փիլիսոփայութիւնից, հոգեբանութիւնը, գեղարուեստական ու գրական քննադատութիւնը և պատմութիւնը: Սկսելով հոգեբանութիւնից, որին նուիրուած է l'Intelligence երկհատոր շարագրութիւնը, հոգեբանութիւնը մասնաւոր կարօտ էր նորոգութեան—գա հին գործի էր, առում է պրոֆ. Գէրիէն:—որ լարել էր դեռ Ռէյզը 1) և էլ ձայն էր հանում: Եթէ հոգեբանութիւնը գիտութիւն է, յայտարարեց Տէն, նորա առարկան այն պէտք է լինի որ գտնէ նոր ֆակտեր, և եթէ նրան արհամարհում են, այդ նրանից է որ նա ոչինչ չի գտնում: Նախկին հոգեբանութիւնը հիմնուած էր ներքին կամ ինքնադնութեան վրայ, նրան նոր ֆակտեր գտնելու ընդունակ դարձնելու համար՝ Տէն հարկաւոր համարեց փոխարինել դիտողութեան գործին և կերպարանափոխել դիտողութեան ենթակայ առարկան: Առաջին նպատակին նա հասաւ նորանով որ անմիջական դիտողութիւնը փոխարինեց այն հոգեբանական նշանների վերլուծութեամբ, որ սովորական է գործածելը մտապատկերների յայտնի խմբեր որոշելու համար: Պէտք է մի կողմ թողնել, ասում էր նա, այնպիսի խօսքեր, որպիսի են դատողութիւն, բանականութիւն, կամք, անձնական կարողութիւն (pouvoir personnel) և մինչև իսկ ես բառը՝ այնպէս, ինչպէս մի կողմ թողնուեցան բառերս՝ կենսական ոյժ, ամօքիչ ոյժ (vis medicatrix), բուսական հոգի, դոքա ոչ այլ ինչ են: Եթէ ոչ գրական փոխարեութիւններ, նոցա ամբողջ նշանակութիւնը այն բանի

մէջ է կայանում որ նոքա ներկայացնում են որոշ յարմարութիւն իբրև այնպիսի ոճեր, որոնք կրճատում են և արտայայտում են համատուրբը՝ ընդհանուր դրութիւնը նշանակելու համար:

Գիտական խնդիրն այն է, որ հոգեբանութեան մէջ բոլոր մութ, անորոշ, վերացական, բարդ և կասկածելի բառերը վերածուին ֆակտերի, ֆակտերի մասնիկների, ֆակտերի յարաբերութեանց և զուգահեռութեանց: «Այդ առաջին քայլն եղաւ, դուք ոչնչացրիք բնականական էութիւնները, այժմ սկսեցէք երկրորդը—բազմացրէք իրական ֆակտերը: Դրա համար Տէնը հոգեբանութեան մէջ ներմուծեց փորձական (էքսպերիմենտալ) հոգեբանութիւնը նորա սահմանած անթիւ ֆակտերով և որ մանաւանդ բնորոշ է, «փոխեց դիտողութեան ենթակայ առարկան» այսինքն գիմեց այն բնագաւառին, որ առանձին յաջողութեամբ վերջին ժամանակներս մշակում են ֆրանսիացիք, նա գիմեց հոգեկան աշխարհում յայտնուող ֆատարանական երևոյթների բնագաւառին, գիտակցութեան երկրաժանութեան և հոգեկան հիւանդութիւնից փոփոխուած գաղափարների և զգացումների զննութեան:

Նոր գիտութեան գործադրութիւնը մարդկային հոգու ուսումնասիրութեան նկատմամբ, Տէնի կարծիքով, պիտի առաջացնէ մեծամեծ արդիւնքներ և այդ արդիւնքներին նա սպասում է խորին ակնածութեամբ: «Նա մօտենում է վերջապէս, այս գիտութիւնը,—բացականչում է նա— և մօտենում է մարդուն՝ նա անցել է տեսանելի և շօշափելի աշխարհի սահմանից,—աստղերից, քարերից, բոյսերից,—այն աշխարհից, որով նորան արհամարհարար սահմանափակում էին, նա ձեռն է մխում դէպի մարդու հոգին ճիշտ և սուր գործիքներով զինուած, գործիքներ, որոնց ճշգրութիւնը ապացուցուած և ստուգուած է երեքհարիւրամեայ փորձով: Արդիւնքը այն եղաւ, որին նա սպասում էր, լաւ ընտրուած, կարեւոր, նշանաւոր, իմաստուն կերպով դասաւորուած և ամենաճիշդ կերպով նշանակուած մանր ֆակտերի գիւտը»:

Այդ ֆակտերի բուռն ոյժի առաջ չը դիմացաւ կենտրոնական գաղափարը, մարդկային եսը առաջ եկաւ իբրև իւր մէջ կատարուող իրողութեանց մի շարք. «Il n'y a rien de réel dans le moi, sauf la file de ses événements». Այս է այն բանաձևը, որին հասաւ գիտական անալիզը, Բայց Տէնը սիրում է իւր գիտական բանաձևերը պատկերներով արտայայտել, Այն ժամանակ իրողութեանց շարքը դառնում է «լուսափայլ խուրձ— une gerbe lumineuse. «Այն լուսափայլ խուրձի հետ միասին, որ մենք ենք ներկայացնում, բարձրում են ուրիշ՝ նման երևոյթ-

1) Կրեկելի շտապաբան փիլիսոփայ († 1796), որի վարդապետութիւնը յենում է հոգեբանական փորձի և առողջ մտքի վերայ:

ների շարքերի, երևոյթներին, որոնք կազմում են մարմնաւոր աշխարհը, որոնք տեսքով զանազան են, բայց նոյն են ըստ էութեան և շրջաններով զսասւորուած են իրար վրայ, իրանց նշոյթներին խաղերով նոքա լցնում են տարածութեան անգունգը, Զանազան բարձրութեանց վերայ անընդհատ և անգագար բարձրացող և մնայլով լի վիճը իջնող՝ փամփուշտների անսահման բազմութիւն—ահա ինչ են բոլոր ֆիզիկական և բարոյական էակները, նոքա ամենքը ոչ այլ ինչ են, եթէ ոչ իրողութեանց մի շարք, որոնց միայն ձևն է մնում և բնութիւնը կարելի է ներկայացնել իբրև մի մեծ հիւսիսափայլ, Կենթորոնների մի ինչ որ համայնագիրի ուղիս, անընդհատ յաջորդականութիւն, մեթէօրների, որ վառւում են միայն որ հանգչեն և նորից վառուին ու հանգչեն, անգագարում և անվերջ—այսպէս է տիեզերքի տեսքը, Այսպէս է գոնեա նորա տեսքը առաջին հայեացքից, երբ նա անդրադառնում է այն պատիկ մեթէօրի մէջ, որ մենք ենք ներկայացնում և երբ իրերը հասկա նալու համար մենք գործադրում ենք միայն բազմա տեսակ մտապատկերներ՝ որոնք անորոշ կերպով հաւաքւում են մեր մէջ միմեանց հետեւից։

#### IV.

Մարդուց անցնենք իւր ստեղծագործութեանց՝ գեղարուեստական խօսքին և արուեստի բնագաւառում, Այստեղ է փայլում Տէն իւր տաղանդի ամբողջ ուժով, այստեղ է նա իրօք մեծ անուն հանում, այստեղ է նա տօնում իւր ամենանշանաւոր յաղթութիւնները, Այս բաժնին վերաբերւում են գլխաւորապէս նորա «Անգլիական գրականութեան պատմութիւնը», նորա կրիտիկական յօդուածները՝ ֆրանսիական գրականութեան վերաբերեալ, գեղարուեստից ուսումնարանում կարգացած գասախօսութիւնները, որ բովանդակում են վերածնութեան ժամանակի իտալական և նիդերլանդական նկարչութեան տեսութիւնը, — և հոգովայնիցի պատմիչ Տիտոս Լիվիոսին նուիրուած հետազոտութիւնը, Այստեղ ևս գիտական մեթոդը գուրս է գալիս մի և նոյն ենթադրութիւններից, գալիս է մի և նոյն պահանջմանց, Կիտութիւնը կրիտիկայի մէջ մտցնելու և կրիտիկական գիտութեան բազկացուցիչ մասը դարձնելու փորձը մտնում է իբրև անհրաժեշտ օղակ, ԺԹ. դարու փիլիսոփայական մտքի պատմութեան մէջ և դրա հետ միասին կրում է իւր վրայ ֆրանսիացի մատենագրի անհատականութեան անջնջելի կնիքը, Տէնի յիշեալ աշխատութիւնները կազմում են մի ներդաշնակ ամբողջութիւն, հաւասարապէս բնորոշ թէ հեղինակի իրա համար և թէ ամբողջ դարաշրջանի, Այստեղ նորան անտէս անելը աններելի է.

այս հողի վրայ Տէնի հետ հաշիւ տեսնել պարտաւոր են նոյն իսկ նորա հակառակորդները, կարելի է գնալ նորանից հեռու, կարելի է բարձրանալ նորանից վեր, ասում է Արսէնիւս, բայց չի կարելի չօգտուել նորա ձեռք բերած արդիւնքներից, նոքա կազմում են հիմնաքար, որի վրայ կարելի է կանգնեցնել ամենաբազմապատկ շինութիւններ, Տէնի մեթոդը, ինչպէս մարգկային գործունէութեան իւրաքանչիւր արտայայտութիւն, ի հարկէ՝ չի կարելի անուանել բացարձակապէս նոր, նա ինքն է ասում թէ «գիւտերը մի քանի անգամ են անուամբ այն, ինչ որ այսօր հնարում են, վաղը գուցէ գրադարանումը գտնես . . . . իւրաքանչիւր գրող ունի իւր նախորդները», Տէնի նախորդներից մի քանիսին մենք արգէն յիշեցինք, յիշենք այստեղ Կիւլիէին 1) և Ժոնֆրուա Սէնտ-Իլէրին 2) որոնք մատակարարեցին նորան գիտական մեթոդ և Սէնտ-Բէօփլին 3) որ հեղինակութեանց ուսումնասիրութիւնից անցաւ մատենագիրների ուսումնասիրութեան, Բայց ինչ էլ փոխ առաւ Տէնն ուրիշներից, ուրիշներ էլ լինելին այդ ուրիշները, բւոլորովին ճիշդ է նկատում ռուս քըննադատը, որ այդ ամենը նա վերամշակեց, յամենայն դէպս այնքան, որ դառնայ իւր անկապտելի սեփականութիւնը, Կենք համեմատաբար աւելի երկար կանգ կառնենք Տէնի գրական գործունէութեան այս շրջանի վրայ, նախ, որ նա ամենից աւելի նշանաւորն է առհասարակ և երկրորդ, որ նա՝ հայերիս համար է մանաւանդ խրատական, մեզ, որ նոր ենք փորձում ստեղծել գեղարուեստական, գրականական և պատմական քննադատութիւն.

Մարգկային ոգու մեծ գործը, ինչ ճանապարհով էլ նա գնայ, ասում է Տէն, ամենուրեք օրէնքներ և պատճառներ ուսումնասիրելն է, նա չի կարող հանգստանալ, մինչև չը ճանաչէ բազմատեսակ իրողութեանց բազմութեան մէջ մշտական և արարչական սթեբը, որոնք առաջացնում են ամեն կողմից նորան պաշարող երևոյթների խայտարղէտ շարքը, Իրա համար անհրաժեշտ է նախ և առաջ համոզուած լինել որ գեղարուեստական և գրական արտադրութիւնները ստեղծուում են որոշ դիտելի օրէնքների համաձայն.

«Մարգկային ստեղծագործութեան մէջ գեղարուեստական արտադրութիւնը թւում է ամենից պա-

1) Հռչակաւոր ֆրանսիացի բնագէտ, ստեղծիչ համեմատական անդամազննութեան (անատոմիայի) և հնէագիտութեան (պալէօնտոլոգիայի), ծն. 1769, մեռ. 1832 թ

2) Անուանի ֆրանսիացի բնագէտ (1772—1844), օրգանական կազմութեան միութիւնը վարդապետող.

3) Յայտնի ֆրանսիացի կրիտիկոս և բանաստեղծ.

տաճական, ակամայ անձնատուր ես լինում այն միտքին, որ նա սկիզբն է առնում ըստ քմաց, առանց կանոնների և հիմունքների, որ նա զոհ է պատահման, անակնկալի, կամայականութեան: Արգարե, երբ արուեստագետը ստեղծում է, նա հետևում է իւր զուտ անձնական երևակայութեան, երբ հասարակութիւնը գովասանում է նա ղեկավարւում է իւր ճաշակով, իսկ այդ ճաշակը անցողական է: — արուեստագետի հնարագործութիւնները և հասարակութեան համակրութիւնները: — այս ամենը կամայական է, ազատ և ըստ երևութիւն՝ նոյնքան քրամածին, ինչպէս որտեղից որ է փշած քամին: Եւ սակայն, ինչպէս և որտեղից որ է մեր երեսին փշած քամին, — այդ ամենը կատարւում է որոշ պայմաններում և սահմանուած օրէնքների համաձայն:

Բայց մարդու ստեղծագործական գործունէութեան մէջ բացի գեղարուեստական տարրից՝ կայ և բարոյական տարր, որ ըստ երևութիւն դուրս է գտնւում գիտական մեթոդի սահմաններից, Ի՞նչ է սակայն գիտական մեթոդը, եթէ ոչ անալիզ, որ ամեն տեղ տեսնուած է ֆակտեր և վեր է ածում ֆակտերը՝ նրանց առաջանող պատճառին: Պարեոն այն չէ, ինչ ֆակտեր կը լինեն — ֆիզիկական թէ բարոյական: մի և նոյն է, նոքա միշտ ունին իրանց պատճառները: Իւր պատճառն ունի փառասիրութիւնը, քաջութիւնն ու ուղղամտութիւնը, որպէս և մարտողութիւնը, մկանուկների շարժողութիւնը և կենդանական ջնքութիւնը: Մոլութիւնն ու առաքինութիւնը բերքեր և արգիւնքներ են, ինչպէս արջատն ու շաքարը և ամենայն բարդ երևոյթ առաջանում է ուրիշ՝ աւելի պարզ երևոյթների ընդհարումից, որոնցից նա կախուած է: :

Այսպիսով պատմաբանն ու կրիտիկոսը գրականութեան և գեղարուեստի շրջանում շարունակում են ընութեան հետազոտողի գործը, Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում ոչինչ հարկաւորութիւն չը կայ փորձի սահմաններից դուրս գալու: Այստեղից եղրակցութիւնն այն է, որ երկու դէպքում ևս դիտողը պէտք է բոլորովին միատեսակ վերարբերուի ընութեան երևոյթներին և մարդկային ոգու արտագրութեանց: «Ինչպէս կայ ֆիզիկական բարեխառնութիւն, որ իւր փոփոխութիւններով որոշում է այս կամ այն տեսակ բոյսերի առաջանալը, այդպէս կայ նաև բարոյական բարեխառնութիւն, որ իւր փոփոխութիւններով որոշում է այս կամ այն տեսակ գեղարուեստի առաջանալը: Եւ ինչպէս որ ֆիզիկական բարեխառնութիւնն են ուսումնասիրում, որ բացատրեն այս կամ այն տեսակ բոյսերի առաջանալը՝ սիմիոգրի կամ գարու: հալուէի կամ եղևնի — գոյնպէս անհրաժեշտ է բարոյական բարեխառ-

նութիւնն ուսումնասիրել, որպէս զի հասկանալք գեղարուեստների զանազան տեսակների առաջ գալը՝ հեթանոսական քանդակագործութիւնը կամ իրապաշտական նկարչութիւնը, միստիքական ճարտարագետութիւնը կամ դասական գրականութիւնը, կրթով լի երաժշտութիւնը կամ գաղափարական բանաստեղծութիւնը: Նոր մեթոդը գործում է բուսաբանի նման, որ հաւասար հետաքրքրութեամբ է ուսումնասիրում նարնջենին ու դափնին, եղևինն ու կեչին: ոգեկան արտագրութեանց ուսումնասիրութեան նոր մեթոդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իւր տեսակի բուսաբանութիւն, միայն ոչ թէ բոյսերի, այլ մարդկային ստեղծագործութեանց վրայ գործադրուած: Այստեսակ վերաբերութիւնը կարող է հասցնել բարոյական անտարբերութեան, և ահա Տէնը յայտարարում է. «Բնագետի համար առաքինութիւնը բերք է, ինչպէս գինին կամ քացախը՝ ճշմարիտ է, պատուական բերք, որից առատութեամբ պէտք է ունենալ, բայց դարձեալ մի բերք, որ պատրաստւում է բոլոր մնացած բերքերի նման, չափելու և որոշելու եմթակայ մի ամբողջ շարք գործողութիւնների միջոցով: Սակայն այստեղ յայտնած տեսակէտին Տէնը հնարաւոր չը համարեց հաւատարիմ մնալ մինչև վերջը: Գասառութեան պահանջները հարկաբեցին նորան յայտնի չափ տալ ունկնդիրներին գեղարուեստական արտագրութեանց գնահատութեան համար և իւր idéal dans l'art աշխատութեան մէջ Տէնն առաջ եկաւ՝ գեղարուեստական արտագրութիւնները իւրեանց արժանաւորութեան համեմատ դասակարգելու: Բուն դասակարգութիւնը, թէև Տէնն աշխատեց հիմնել նրան առարկայական (օբիեկտիւ), գիտական նշանների վրայ, այնքան հեռու տարաւ նորան այն բարոյական անտարբերութիւնից, որով կարծես սողորուած էր նորա «գիտական բանաձևը» որ ի մեծ զարմանս բարեպաշտ ընթերցողին, բարձրագոյն կարգում դասուեցան այնպիսի կրօնական գրուածներ, որպիսիք են Սաղմոսը, Աւետարանը, Քրիստոսին և Թովմա կեմպացու «նմանութիւն Յիսուսին»: Բայց դրանից դուրս՝ գիտական մեթոդը գրականութեան և գեղարուեստից պատմութեան մէջ դարձաւ մի միջոց՝ քննելի երևոյթի ծագումը բացատրելու: Երեք տարրով է մեկնում Տէնն այդ ծագումը — ազգի կամ ցեղի ոգեկան կազմով (la race), այն միջավայրով որտեղ առաջ է գալիս քննելի արտագրութիւնը, և պատմական բովանդակ, Պրոֆ. Գերիէն նկատում է որ այս գործօններից երրորդը Տէնի մօտ անմշակ մնաց, բայց դրա փոխարէն՝ նորա կենդանի հոսանքութիւնը իւրաքանչիւր գրական յիշատակարան փոխում էր՝ ազգային ոգին բնորոշելու մի

